Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 256 - Ա
որոշման

«Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, 32/2 հասցեում գտնվող Հայորդյաց տան շենքի հիմնովին վերանորոգումը:<br>Հաշվի առնելով, որ շենքը շատ հին է (կառուցվել է 1970-ականներին) և դժվարություններ են առաջացել շատ հին լինելու պատճառով՝ շենքում կրթադաստիարակչական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտություն է առաջացել ստեղծել ժամանակակից ու հարմարավետ պայմաններ ու ամբողջովին վերանորոգել այն: Վերանորոգման ենթակա տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 6500 քառ. մետր: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ) (գրանցված՝ ԱՄՆ-ի Դելավերի նահանգ, Նյու Քեսլ համայնք, 19808 ք. Վիլմինգտոն, Սենթրվիլ փ. 2711, #400 հասցեում, «29» մարտի 1955 թ., գրանցման թիվ՝ 0486313) |
| 4. | Ծրագրի կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, հոգևոր |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2,010,338,337 դրամ |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործությունն ստացողը | «Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի» կրոնական կազմակերպություն, Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի քաղաք Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2020 թվականի մարտի 10-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Շենքի վերանորոգման նախագծային աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի ապրիլի 10-ից մինչև 2020 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 14,570,000 դրամի չափով:<br>2. Շենքի վերանորոգման հեղինակային հսկողության աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի մարտի 10-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ 21,600,000 դրամի չափով:<br>3. Շենքի շինարարական աշխատանքներ (շենքի ու շենքը պարփակող շերտերի ուժեղացման աշխատանքներ)՝ 780,000,000 դրամի չափով.<br>- ապրանքների ներմուծում՝ 69,000,000 դրամի չափով:<br>Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի մարտի 10-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:<br>4. Շենքի ջրամատակարարման, ջրահեռացման և ջերմասառնամատակարարման համակարգերի մոնտաժման առաջին փուլի աշխատանքներ՝ 70,000,000 դրամի չափով:<br>Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հուլիսի 10-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:<br><br>5. Շենքի շինարարական II-րդ փուլի աշխատանքներ, այդ թվում՝<br>5.1.1. ներքին հարդարման աշխատանքներ՝ 340,168,337 դրամի չափով<br>5.1.2. կաթսայատան կառուցման աշխատանքներ՝ 24,000,000 դրամի չափով<br>5.1.3. բարեկարգման աշխատանքներ՝ 80,000,000 դրամի չափով<br>5.1.4. էլեկտրամատակարարման համակարգի շինմոնտաժային աշխատանքներ՝ 121,000,000 դրամի չափով<br>-ապրանքների ներմուծում՝ 70,000,000 դրամ |

| | | |
|---|---|---|
| | | 5.1.5. ջերմասառնամատակարարման համակարգի մոնտաժման II-րդ փուլի, սանհանգույցների սարքավորումների մոնտաժային, օդափոխության, հրդեհամարման համակարգերի, կաթսայատան սարքավորումների մոնտաժային աշխատանքներ՝ 131,000,000 դրամի չափով.<br>- Ապրանքների ներմուծում՝ 50,000,000 դրամի չափով.<br>Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի ապրիլի 25-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:<br>6. Լողավազանի երեսապատման և սարքավորումների մոնտաժման աշխատանքներ՝ 30,000,000 դրամի չափով:<br>Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:<br>7. Շենքի արտաքին լուսամուտների, դռների և ճակատների բացվածքների ապակեպատման աշխատանքներ՝ 95,000,000 դրամի չափով:<br>Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:<br>8. Շենքի ներքին դռների և վիտրաժների մոնտաժման աշխատանքներ՝ 35,000,000 դրամի չափով:<br>Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի մայիսի 15-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ը:<br>9. Վերելակի մոնտաժման աշխատանքներ՝ 4,000,000 դրամի չափով,<br>- վերելակի ներմուծում՝ 20,000,000 դրամի չափով:<br>Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի ապրիլի 15-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:<br>10. Տեսահսկման, հակահրդեհային, մուտքի վերահսկման համակարգերի, և համակարգչային ցանցի մոնտաժային աշխատանքներ՝ 55,000,000 դրամի չափով:<br>Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում: |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Շենքի վերանորոգման նախագծային աշխատանքներ՝ 14,570,000 դրամ, առանց ԱԱՀ-ի<br>2. Շենքի վերանորոգման հեղինակային հսկողություն՝ 21,600,000 դրամ, առանց ԱԱՀ-ի<br>3. Շենքի շինարարական աշխատանքներ (շենքի ու շենքը պարփակող շերտերի ուժեղացման աշխատանքներ)՝ 780,000,000 դրամ, առանց ԱԱՀ-ի<br>- ապրանքների ներմուծում՝ 69,000,000 դրամ, առանց ԱԱՀ-ի<br><br>4. Շենքի ջրամատակարարման, ջրահեռացման և ջերմասառնամատակարարման համակարգերի մոնտաժման առաջին փուլի աշխատանքներ՝ 70,000,000 դրամի չափով Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հուլիսի 10-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:<br>5. Շենքի շինարարական II-րդ փուլի աշխատանքներ, այդ թվում՝<br>5.1.1. ներքին հարդարման աշխատանքներ՝ 340,168,337 դրամ, առանց ԱԱՀ-ի<br>5.1.2. կաթսայատան կառուցման աշխատանքներ՝ 24,000,000 դրամ, առանց ԱԱՀ-ի<br>5.1.3. բարեկարգման աշխատանքներ՝ 80,000,000 դրամ, առանց ԱԱՀ-ի<br>5.1.4. էլեկտրամատակարարման համակարգի շինմոնտաժային աշխատանքներ՝ 121,000,000 դրամ, առանց ԱԱՀ-ի<br>- ապրանքների ներմուծում՝ 70,000,000 դրամ, առանց ԱԱՀ-ի<br>5.1.5. ջերմասառնամատակարարման համակարգի մոնտաժման II-րդ փուլի, սանհանգույցների սարքավորումների մոնտաժային, օդափոխության, հրդեհամարման համակարգերի, կաթսայատան սարքավորումների մոնտաժային աշխատանքներ՝ 131,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի.<br>- Ապրանքների ներմուծում՝ 50,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի:<br>6. Լողավազանի երեսապատման և սարքավորումների մոնտաժման աշխատանքներ՝ 30,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի.<br>7. Շենքի արտաքին լուսամուտների, դռների և ճակատների բացվածքների ապակեպատման աշխատանքներ՝ 95,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի.<br>8. Շենքի ներքին դռների և վիտրաժների մոնտաժման աշխատանքներ՝ 35,000,000 դրամ, առանց ԱԱՀ-ի<br>9. Վերելակի մոնտաժման աշխատանքներ՝ 4,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի<br>- վերելակի ներմուծում՝ 20,000,000 դրամի չափով: |

| | | |
|---|---|---|
| | | 10. Տեսահսկման, հակահրդեհային, մուտքի վերահսկման համակարգերի և համակարգչային ցանցի մոնտաժային աշխատանքներ՝ 55,000,000 դրամ, առանց ԱԱՀ-ի |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպու-թյունների հետ | Չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով: |

»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ — Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

08.04.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ